



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում / վերլուծություն /

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 172405 գործարքներ, որոնց քանակը, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 10.8%-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 44104 օտարման գործարքների 74.1%-ը կազմել են առուվաճառքները, 25.4%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների 41.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.9%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 4.4%-ով: 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 13374 առուվաճառքի գործարքների 60.9%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.1%-ով:

	2012թ. 11 ամիսներ	2013թ. 11 ամիսներ
Օտարում	42247	44104
որից		
առուվաճառք	32313	32666
նվիրատվություն	9655	11199
փոխանակում	279	239

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	11 ամիս 2012թ.	11 ամիս 2013թ.
Կենտրոն	411100	426900
Արաբկիր	340600	355000
Քանաքեռ-Զեյթուն	268000	281800
Նոր-Նորք	231300	249600
Ավան	240800	258300
Էրեբունի	237300	248000
Շենգավիթ	237000	253800
Դավթաշեն	261200	273400
Աջափնյակ	228500	246400
Մալաթիա-Սեբաստիա	226400	239300
Նուբարաշեն	140700	150700
Միջինը Երևանում	256600	271200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 5.7%-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 4115 բնակարաններ, որոնց քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.7%-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների

առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		11 ամիս 2012թ.	11 ամիս 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	111400	114700
	Ապարան	49400	56100
	Թալին	61200	63900
Արարատ	Արտաշատ	92100	94700
	Մասիս	108700	114400
	Վեդի	96900	99300
	Արարատ	73100	75100
Արմավիր	Վաղարշապատ	151700	153900
	Արմավիր	117500	120800
	Մեծամոր	86000	87300
Գեղարքունիք	Սևան	97900	99100
	Գավառ	53300	59100
	Մարտունի	105000	107600
	Վարդենիս	35600	43900
	Ճամբարակ	22300	27700
Լոռի	Վանաձոր	85700	88200
	Ստեփանավան	74300	74500
	Սպիտակ	99900	99800
	Ալավերդի	50900	54900
	Տաշիր	42300	46400
	Թումանյան	11100	11000
	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	19600	20000
Կոտայք	Աբովյան	151600	154500
	Նոր Հաճն	128200	128500
	Բյուրեղավան	107000	107900
	Եղվարդ	108600	109300
	Հրազդան	59100	63600
	Ծաղկաձոր	293400	292500
	Չարենցավան	83400	85300
Շիրակ	Գյումրի	107000	109300
	Արթիկ	64300	66400
	Մարալիկ	36400	40200
Սյունիք	Գորիս	115200	120500
	Կապան	89400	91800
	Սիսիան	81500	90600
	Մեղրի	68500	79400
	Ագարակ	41700	45900
	Քաջարան	95800	94400
	Դաստակերտ	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	84800	94300
	Եղեգնաձոր	118300	122900
	Զերմուկ	100300	111800
Տավուշ	Դիլիջան	103000	112100
	Իջևան	112900	117900
	Բերդ	51000	59500

	Նոյեմբերյան	41800	48700
	Այրում	25000	31000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 4.5%-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 4522 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1204, մարզերում միասին վերցրած՝ 3318: 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 2.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել՝ 4.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 5.1%-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	11 ամիս 2012թ.	11 ամիս 2013թ.
Կենտրոն	462900	475200
Արաբկիր	369500	382100
Քանաքեռ Զեյթուն	279900	294300
Նորք Մարաշ	306300	318300
Ավան	257900	269900
Էրեբունի	226600	238800
Շենգավիթ	244200	254300
Դավթաշեն	262500	275300
Աջափնյակ	238900	249100
Մալաթիա Սեբաստիա	226300	237400
Նուբարաշեն	144800	149900
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	274500	285900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը./ 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 4.2 %-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		11 ամիս 2012թ.	11 ամիս 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	132500	136000
	Ապարան	53600	59800
	Թալին	69000	69100
Արարատ	Արտաշատ	98700	99800
	Մասիս	111900	114900
	Վեդի	100100	102100
	Արարատ	87400	88000
Արմավիր	Վաղարշապատ	149900	153000
	Արմավիր	103300	106900
Գեղարքունիք	Սևան	92700	94700
	Գավառ	50500	57100
	Մարտունի	92100	95800
	Վարդենիս	34500	40600
	Ճամբարակ	26300	30800
Լոռի	Վանաձոր	96700	99800
	Ստեփանավան	87400	89800
	Սպիտակ	112600	113900
	Ալավերդի	45600	49600
	Տաշիր	50600	51900
	Թումանյան	12100	12000
	Շամլուղ	13200	13900
	Ախթալա	29500	29900
Կոտայք	Աբովյան	150700	156400
	Նոր Հաճն	129100	129800
	Բյուրեղավան	120000	120400
	Եղվարդ	115300	116100
	Հրազդան	78600	82500
	Ծաղկաձոր	304500	305000
	Չարենցավան	79900	82900
Շիրակի	Գյումրի	116700	118400
	Արթիկ	61000	63100
	Մարալիկ	48700	51900
Սյունիք	Գորիս	127000	129800
	Կապան	98100	99700
	Սիսիան	89100	95800
	Մեղրի	76000	84100
	Ագարակ	46100	46900
	Դաստակերտ	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	83400	89700
	Եղեգնաձոր	112000	116600
	Ջերմուկ	120900	130800
Տավուշ	Դիլիջան	106200	112400
	Իջևան	120700	122800
	Բերդ	58000	59800
	Նոյեմբերյան	46000	47800
	Այրում	34400	35800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 3.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 14137 միավոր /6365.73 հա/ հողեր, որից Երևանում՝ 1537 միավոր /127.33 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 7344 միավոր /5787.49 հա/, որից Երևանում՝ 63 միավոր /45.03 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 4623 միավոր /380.83 հա/, որից Երևանում՝ 814 միավոր /33.35 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1835 միավոր /118.43 հա/, որից Երևանում՝ 625 միավոր /45.53 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 153 միավոր /40.38 հա/, որից Երևանում՝ 35 միավոր /3.42 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 71 միավոր /33.37 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 103 միավոր /4.90 հա/,
- ջրային հողեր՝ 8 միավոր /0.33 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 11519 միավորի /5046.31 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 1306 միավոր /77.69 հա/, նվիրատվության գործարքներ՝ 2514 միավոր /1293.62 հա/, որից Երևանում՝ 197 միավոր /46.76 հա/ և փոխանակության գործարքներ՝ 104 միավոր /25.80 հա/, որից Երևանում՝ 34 միավոր /2.88 հա/:

Հանրապետությունում 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.3%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.2%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 1.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 1.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1267.02 հա, որից 1217.02 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 27.5%-ը կամ 3163 գործարքներ /973.52 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 768 միավոր /24.71 հա/, իսկ 71.6%-ը կամ 8246 միավորը /4047.17 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 534 միավոր /52.84 հա/: 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 110 գործարք /25.62 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության հրավուների վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող															
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր			
									բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի										բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/					
Երևան	0	0.00	11	0.71	354	4.79	403	19.21	48	9.41	23	2.69	317	21.45	146	19.29								
Արագածոտն	356	215.75	5	0.46	25	1.02	124	8.42	776	542.71	1	0.07	260	28.09	19	1.82								
Արարատ	138	134.99	5	1.05	71	4.63	79	1.41	722	402.40	10	2.33	439	37.07	49	1.04								
Արմավիր	52	149.22	5	0.48	21	1.36	48	1.00	921	1067.80	2	0.02	456	46.10	28	0.99								
Գեղարքունիք	20	45.54	5	5.20	111	8.88	63	4.17	501	332.12	4	0.38	162	20.41	13	1.70								
Լոռի	19	4.89	12	1.51	63	2.10	93	1.87	308	182.95	6	3.59	95	11.42	21	0.25								
Կոտայք	121	188.05	9	0.83	192	10.10	184	5.11	866	456.47	7	7.57	722	59.95	94	13.55								
Շիրակ	8	4.53	2	0.22	58	1.77	45	2.04	325	306.37	4	1.84	134	16.88	20	0.87								
Սյունիք	20	48.89	11	5.58	16	0.42	35	0.99	187	185.36	2	0.02	42	4.11	22	1.18								
Վայոց Ձոր	39	48.72	11	1.66	18	1.24	23	1.06	96	149.77	0	0.00	65	7.07	11	0.48								
Տավուշ	20	9.65	5	1.33	71	4.36	65	6.97	154	65.14	3	0.41	98	10.87	29	7.39								
Ընդամենը	793	850.23	81	19.03	1000	40.67	1162	52.25	4904	3700.50	62	18.92	2790	263.42	452	48.56								

Ստորև ներկայացվում է 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	
Երևան	580	12.04	10	0.51	330	3.01	240	8.51	188	12.67	0	0.00	1	0.20	24	1.78	163	10.69
Արագածոտն	95	5.46	2	0.19	14	0.27	79	5.00	129	134.76	70	130.32	3	0.27	11	0.75	45	3.42
Արարատ	19	0.34	0	0.00	5	0.21	14	0.13	266	132.91	130	126.15	5	1.05	66	4.43	65	1.28
Արմավիր	23	0.59	1	0.10	5	0.15	17	0.34	98	149.34	47	147.08	4	0.38	16	1.22	31	0.66
Գեղարքունիք	26	1.59	0	0.00	22	1.33	4	0.26	171	60.44	18	43.79	5	5.20	89	7.55	59	3.90
Լոռի	47	1.11	3	0.82	17	0.09	27	0.20	138	8.49	17	4.13	9	0.69	46	2.00	66	1.67
Կոտայք	28	2.32	1	0.10	17	1.06	10	1.16	469	200.81	112	187.09	8	0.73	175	9.04	174	3.95
Շիրակ	41	0.86	0	0.00	24	0.49	17	0.37	72	7.70	8	4.53	2	0.22	34	1.28	28	1.67
Սյունիք	18	3.39	3	3.02	7	0.30	8	0.07	63	49.30	19	45.69	8	2.57	9	0.12	27	0.92
Վայոց Ձոր	6	0.043	0	0.00	1	0.00	5	0.04	82	50.50	36	46.60	11	1.66	17	1.23	18	1.01
Տավուշ	15	0.68	0	0.00	8	0.16	7	0.52	146	21.64	20	9.65	5	1.33	63	4.20	58	6.46
Ընդամենը	898	28.42	20	4.74	450	7.07	428	16.60	1822	828.56	477	745.03	61	14.30	550	33.60	734	35.63

Հանրապետությունում 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 316 գործարքներ /105.21 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 5.6%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 91.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 10.8%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 7.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 20.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 12.1%-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ նվազել է 15.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	43	90.25	22.3	7609.5	446.5	436	208.55	365.0	12000.0	3607.4
Ապարան	5	1.74	137.5	2982.9	1009.2	85	49.05	86.5	2727.3	729.7
Թային	20	35.08	37.7	640.0	103.0	163	128.97	93.6	5494.5	669.9
Ծաղկահովիտ	2	3.26	193.2	381.4	287.3	64	137.06	79.5	1000.0	278.3
Արարատի մարզ										
Արտաշատ	29	18.94	75.9	5555.6	2654.0	344	102.11	335.1	10833.3	2791.4
Մասիս	53	67.46	47.3	2104.0	590.1	182	132.13	200.0	11904.8	3100.3
Վեդի	48	39.76	33.3	4495.2	385.8	183	162.39	207.0	10795.1	1846.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	21	89.22	60.4	2205.0	358.7	464	296.69	294.3	9090.0	1344.5
Բաղրամյան	9	37.35	70.9	70.9	70.9	139	530.72	90.6	2561.1	774.4
Վաղարշապատ	17	20.50	69.1	1891.9	656.6	266	143.33	444.4	11764.7	2312.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	5	9.97	117.6	700.0	483.0	295	81.88	199.8	1875.0	422.9
Ճամբարակ	2	0.61	180.6	479.6	330.1	74	61.81	60.5	953.3	353.7
Մարտունի						25	4.28	51.1	2850.0	738.3
Սևան	9	31.30	117.9	1221.0	603.9	20	12.83	52.2	2134.8	319.5
Վարդենիս	2	1.91	44.0	55.0	49.5	82	161.52	41.2	2575.1	417.6
Լոռու մարզ										
Ալավերդի	5	0.61	281.4	3762.0	1806.5	52	28.00	170.4	6424.2	589.9
Գուգարք						90	24.85	234.6	6065.9	766.4
Սյիտակ						12	3.58	250.0	5555.5	731.1
Ստեփանավան	12	3.52	184.7	747.3	518.0	54	47.99	90.6	1686.6	325.3
Տաշիր						84	45.11	45.3	1384.4	157.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	46	48.69	75.1	3086.7	505.2	338	156.89	279.3	11942.7	4348.6
Եղվարդ	52	112.23	68.9	2121.2	515.7	355	199.69	174.4	11971.8	2562.0
Հրազդան	14	26.17	44.1	1335.4	773.6	166	87.86	130.5	10256.4	1619.9
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	2.24	66.1	687.5	301.9	110	82.53	252.0	1693.1	624.1
Ամասիա						14	44.22	40.9	261.0	126.9
Անի						86	103.11	110.6	546.9	388.0
Աշոցք	3	1.44	66.6	238.9	124.5	25	22.44	58.5	215.8	127.9
Արթիկ	1	0.84	420.0	420.0	420.0	90	54.08	79.4	1428.6	417.5
Սյունիքի մարզ										
Գորիս	6	3.83	149.9	500.0	325.0	43	34.77	92.6	1023.2	727.3
Կապան	13	41.86	137.5	1785.0	508.8	21	11.72	120.0	841.6	359.8
Մեղրի						22	3.30	193.0	3000.0	731.4
Սիսիան						99	135.25	46.3	1977.4	545.5

Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	23	25.87	35.4	633.7	167.9	58	120.01	125.0	10000.0	1916.4
Վայք	13	20.73	38.8	8505.0	811.9	36	29.32	58.8	1430.7	632.4
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	1775.0	1775.0	1775.0	52	13.87	213.3	3783.8	683.1
Իջևան	13	6.35	154.0	550.0	339.5	28	14.44	267.5	9454.5	1243.6
Նոյեմբերյան	6	3.11	151.7	4802.4	1445.0	73	35.85	46.7	7368.4	882.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	2402.7	112.7	4040.4	2485.1	208	192387.9	130.7	22200.0	2577.5
Ապարան	2	2188.0	176.9	452.0	314.5	22	25120.0	124.1	609.6	389.9
Թային	3	2882.0	158.8	213.2	186.0	18	34384.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						9	24013.8	60.0	214.3	89.9
Արարատի մարզ										
Արտաշատ	12	11691.6	145.0	5308.3	609.2	127	125842.5	173.9	7140.3	896.4
Մասիս	44	27454.0	841.3	3693.8	1631.0	212	137807.0	187.5	25000.0	1208.9
Վեդի	10	5117.7	645.8	1614.6	1000.7	99	105928.9	126.1	5000.0	661.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	5222.9	316.9	4116.0	2537.6	183	206041.0	131.6	9090.9	1214.3
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	9	12222.0	100.0	833.3	239.8
Վաղարշապատ	9	5744.6	95.9	3828.0	1626.0	256	234987.3	197.4	26528.4	1529.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	26	29613.8	113.2	895.0	205.0	33	35781.9	186.6	1084.3	682.0
Ճամբարակ	2	2077.0	106.6	108.7	107.7	4	9615.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	53	40907.8	113.5	410.7	259.7	96	111954.2	119.3	5000.0	282.1
Սևան	5	1995.3	700.5	1802.1	1018.5	10	11997.5	240.0	3110.4	315.6
Վարդենիս	3	884.3	66.6	1200.0	622.2	18	32740.2	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	9	441.4	778.8	1650.0	1369.2	19	24893.0	114.3	1388.9	216.8
Գուգարք	25	8461.1	151.2	4976.6	2311.3	38	41700.3	77.9	14083.3	1242.5
Սպիտակ	8	9210.1	153.3	677.3	277.4	22	27152.0	104.9	1348.3	206.3
Ստեփանավան	2	1800.0	187.2	554.4	370.8	12	14535.3	88.2	1666.7	175.5
Տաշիր	2	112.0	587.8	622.0	604.9	4	5924.8	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արովյան	141	61600.0	275.5	5854.1	2880.2	342	272231.5	264.5	35353.5	1990.2
Եղվարդ	31	27169.0	230.0	5471.4	2111.5	323	271498.8	173.6	27000.0	2856.2
Հրազդան	3	1589.0	1272.0	4750.0	2477.7	53	49292.5	117.7	34848.5	1318.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	12	3442.2	554.4	4882.0	2480.6	56	52538.8	113.6	18750.0	334.0
Ամասիա	1	416.0	165.4	165.4	165.4	3	10910.0	45.3	274.7	71.0
Անի	9	5200.0	133.2	404.6	311.4	19	25346.0	67.9	180.6	173.5
Աշոցք						4	22330.0	40.8	144.0	63.4
Արթիկ	12	3778.6	279.2	3933.3	1176.3	51	57213.1	111.8	5000.0	217.2
Սյունիքի մարզ										
Գորիս						9	10848.0	112.2	1700.0	368.0
Կապան	9	1198.0	1147.9	2900.0	1647.4	11	5926.0	67.9	2638.9	302.2
Մեղրի						13	7834.9	68.5	632.9	211.8
Սիսիան						9	16475.0	123.5	875.0	208.9

Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	6830.0	64.8	1496.4	422.1	54	52044.7	96.7	7659.6	504.1
Վայք	9	5519.4	850.6	1312.5	944.0	10	17076.0	120.7	1448.3	219.8
Տավուշի մարզ										
Բերդ	3	4862.0	45.0	1583.3	839.8	9	9568.5	75.8	810.0	116.9
Իջևան	56	35071.8	214.3	3000.0	2369.7	75	81906.4	74.1	14423.1	517.0
Նոյեմբերյան	4	2059.7	317.2	1650.9	980.1	13	15913.2	125.0	1948.1	228.4

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7704 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 70.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 4.2%-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 534 բնակարանների, 824 անհատական բնակելի տների, 3351 հասարակական, 870 արտադրական նշանակության օբյեկտների, 1941 միավոր /11088.74 հա/ հողերի, 174 ավտոտնակների և 10 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 144 վարձակալության գործարքների, այդ թվում 86 միավոր /0.92 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 24.2%-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 11088.74 հա հողերից 8.33 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 11080.42 հա հողերի 9642.23 հա գյուղատնտեսական նշանակության, 1058.98 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 42.36 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4932.01 հա, որից 4912.46 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 21214 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.3%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.5%/, առանձնատների /23.8%/. հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /7.7%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11701 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ աճել է 12.8%-ով:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 2174.70 հա մակերեսով հողեր, որից 170.19 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 85.2%-ը կամ 1852.02 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 5.40 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 781.23 հա, որից 754.30 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1705 գործարքներ: 2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 30.2%-ով:

Երևանում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1183 գործարքներ, որը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 44.6%-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 6.1%-ով:

	2012թ. 11 ամիսներ	2013թ. 11 ամիսներ
Գրավադրում	19741	21214
	որից	
հիփոթեք	1310	1705

2013թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 19409 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 3.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.8%/: